

APM

2-5553a

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԳՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հանրային գրադարան
Հայաստանի Կոմունիստական
Գնականության կենտրոն
Մարտի 1 1980 թ. 000 000

ՀԱՅԱՍՏԱՆ

00

60

Handwritten scribbles

ԿՈՒՆՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՍԱԿ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐԻՆ՝ ԼՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՄԱՍԻՆ

МНВ. № 14761



ՀԿ(Բ)ԿԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԵՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՅԵՐԵՎԱՆ 1980

07
C-45

Apr.

23 JUN 2009

07
5-45

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Այս առաջին մեթոդական նամակն է լրա-
դրային հարցերին նվիրված դասախոսու-
թյունների առթիվ:

Ձեռնվա ամիսների ընթացքում յուրա-
քանչյուր հեռակայող կստանա 8 դասախոսու-
թյուն: Ծրագրի բովանդակութունը կլինի
պատի թերթի աշխատանքները՝ սկսած խճ-
բազրական կոլեզիան կազմակերպելուց և
վերջացրած պատի թերթի տեխնիկական ձևա-
վորումով:

Դասախոսությունների ծրագրերն այն-
պես են կազմված, վոր մասնավորից զեպի
ընդհանուրն են գնում, վերլուծում են պատի
թերթերի խմբագիրների և խմբկոլնների աշ-
խատանքի կոնկրետ որինակները, նրանց բո-
վանդակութունը կառուցելով կուսակցու-
թյան կողմից գյուղում կատարվող աշխա-
տանքի ներկայիս կարևորագույն խնդիրների
հիման վրա:

«Լենինն ու Ստալինն ինչպես են սովորեց-
նում աշխատել բոլշևիկյան մամուլում» դա-
սախոսությունը, վորպես հեռակայողի ստա-
ցած գիտելիքներն ընդհանրացնող նյութ
տրվում է ծրագրի վերջում:

Գևորգյանի սպարան, Յերևան

Հրատ. 3542 Գլավլրտ Ա.-8 Գառվեր 1356 Տրամ 350



40402-63
(29598-63)

ԻՅՄՆԱԿԱՆ ԳԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ինչպես կազմակերպել պատի թերթի խմբկողի աշխատանքը:
2. Ինչպես աշխատել գյուղթղթակիցների հետ:
3. Պատի թերթի համարի լույս ընծայումը:
4. Պատի թերթի մասսայական աշխատանքը:
5. Ինչպես գրել և ուղղել թղթակցությունը:
6. Պատի թերթի արտաքին ձևավորումը:
7. Պատի թերթի գործունեությունը:
8. Լեհիկոն ու Ստալինն ինչպես են սովորեցնում աշխատել բուլչեիկյան մամուլում:

ԳԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍՊԱՆՎԱՆԵՐԻ ԾՈՒՐՁԸ

1. Պատի թերթը՝ ձևուանը:
2. Կոլանտեսությունների կուլտուրական պահանջները և պատի թերթերի աշխատանքը:
3. Գարնանացանը և պատի թերթի խմբագիրները:
4. Մամուլի որը կոլանտեսությունում:
5. Բերքահավաքը, հացամթերումները և պատի թերթերի խնդիրները:
Հեռակա ուսուցումը կազմակերպելու

կարգը նշված է խմբագիրներին ուղարկած ծրագրում:

Մեր հեռակա դասընթացների ղեկավար-կոնսուլտանտը (չրջանային թերթի խմբագիրը) պետք է այնպես անի, վոր յուրաքանչյուր ունկնդիր կարգա և յուրացնի բոլոր դասախոսությունները. դասախոսությունները կարգալիս վորոչ զիտողություններ զբի առնի, կարողանա պատասխանել յուրաքանչյուր դասախոսություն ստուգիչ հարցերին և կատարի գործնական առաջադրանքները:

Միաժամանակ պետք է հեռակայողին ոգնել, վոր նա կարողանա իր պարապմունքները տանը նպատակահարմար ձևով կազմակերպել: Չե՞ վոր շատ գյուղթղթակիցներ ինքնուրույն աշխատանքի փորձ չունեն: Ղեկավարը հեռակայողներին պետք է ոգնի պլան կազմել, պետք է նրանց ցույց տա, թե դասախոսությունների նյութն ինչպես մասերի բաժանել, վորպեսզի դասախոսությունը կարգա վոչ թե միանգամից, այլ մաս-մաս: Պետք է հեռակայողներին ցույց տալ, թե ինչ նշանակություն ունի պարապմունքի պլանայությունը: Ժամանակը ճիշտ դասավորելու համար հեռակայողը պետք է պարզ պատկերացում ունենա, թե յերբ կվերջանա մի դասախոսություն ուսումնասիրությունը, յերբ կսկսեն յերկրորդի ուսումնասիրությունը և այլն:

Անցյալ տարի Միութեան այլ վայրերում շատ հեռակայողներ վոչ միայն իրենք էլին լրջորեն պարապում, այլ և ոգնում էլին իրենց կոլտնտեսութեան մյուս գյուղթղթակիցներին, դասախոսութեանները մշակում էլին նրանց հետ միասին: Գյուղթղթակիցների սուտեցումը կոլեկտիվ ձևով կազմակերպող այդպիսի հեռակայողներին պետք է ամեն կերպ խրախուսել և շարունակ ոգնել նրանց խորհուրդներով, մեթոդական ցուցումներով, գրա-կանութեամբ:

Ինքնուրույն ընթերցանութեան միջոցով հեռակայողի ձեռք բերած գիտելիքները պետք է ամրապնդվեն կոնսուլտացիաներում: Ամբողջ հեռակա ուսուցման հաջողութեանը կախված է կոնսուլտացիաների կազմակերպումից: Լավ դրված կոնսուլտացիան կբարձրացնի հեռակայողի հետաքրքրութեանը թե դեպի դասախոսութեանները և թե դեպի խմբագրական աշխատանքի կատարումը: Լավ կազմակերպված կոնսուլտացիաները և՛ ուղղակի, և՛ անուղղակի կազմեն պատի թերթերի վորակի բարելավման վրա: Դրա համար ել անպայման յուրաքանչյուր դասախոսութեան շուրջը պետք է կոնսուլտացիա կազմակերպել:

Վոչ մի դեպքում չի կարելի կոնսուլտացիան վերածել ուսումնական պարապմունքի կարելով այն ունկնդիրների գործնական աշխատանքներից: Ղեկավարը գործն այնպես

պիտի կազմակերպի, վեր կոնսուլտացիան միաժամանակ դառնա շրջանային թերթերի կենդանի ու ռպերատիվ դեկավարություն: Կոլտնտեսային ու բրիգադային քերթերի խմբագիրներին:

Դրա առաջին պայմանը պարապմունքների կանոնավորութեանն է: Վորոչ ղեկավարներ կարծում են, թե ամբողջ ձմեռվա ընթացքում խմբագիրների հետ պարապելու փոխարեն այլևի լավ է զարնանացանից առաջ նրանց ազատել մի քանի օրով և անցնել ամբողջ ծրագիրը միանգամից: Այս շատ սխալ տեսակետ է: Նյութերի մակերեսային յուրացումը վոչինչ ընդհանուր չունի լրջորեն կադրեր աճեցնելու խնդրի հետ: Այդպիսի աշխատանքը միայն խմբագիրներին վնասակար սեզոնայնութեան է վարժեցնում: Անցյալ յետուն շրջանը—խմբագիրը հանդստադավ, պատի թերթը ցուղարեց յույս տեսնել: Մինչդեռ, յեթե կոնսուլտացիան կազմակերպվի ամբողջ ձմեռվա ընթացքում, յուրաքանչյուր տասնորյակում մեկ անգամ, ապա խմբագիրը—կոնսուլտացիայի ղեկավարը լավ կուսումնասիրի մարդկանց: Նա վոչ միայն վորոչ գիտելիքներ կտա հեռակայողներին, այլ և կհետևի, թե նրանք ինչպես են ոգտվում այդ նյութից, կոչնի նրանց՝ աշխատանքի ընթացքում առաջացած գժվարութեանները հաղթահարելու: Կանոնավոր կոնսուլտացիաները կնպաստեն պատի

Թերթերի կանոնավոր հրատարակմանը: Կոնսուլտացիաները կամրապնդեն հեռակայողի կասլը շրջանային թերթի խմբագրութեան հետ, հեռակայողը կդառնա վոչ միայն պատի թերթի լավ խմբագիր, այլ և շրջանային թերթի հենարանը, նրա ակտիվ թղթակիցը:

Յերկրորդ պայմանն է— ուսումնասիրվող առարկաների սերտ կապակցումը կյանքի, պատի թերթերի խմբագիրների գործնական աշխատանքի հետ: Հեռակայողներին խակապես սպեբատիվ ղեկավարութուն ցույց տալու համար հարկավոր է միայն մի պարագր մունքին քննութեան առնել ունկնդիրների յույս ընծայած պատի թերթերը:

Պատի թերթերի գրական կողմերի ու սխալների քննութեանով կոնսուլտանտն ամենից լավ կպարզի, թե դասախոսութեան նյութերն ինչպես են յուրացված: Վոչ մի դեպքում չի կարելի դասախոսութեանների ու ուսումնասիրութեանը հասցնել նյութի անգիր անելուն, ստուգիչ հարցերին մեքենայաբար պատասխանելուն: Դասախոսութեանը յուրացված կարելի յե համարել միայն այն ժամանակ, յերբ հեռակայողը սովորի գործնական աշխատանքում կիրառել այն ցուցումները, վոր տրվում են դասախոսութեան մեջ:

ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ՅԵՎ ԴԼՍԻՍԵՐԱԿԵԼ

Հեռակա ուսուցման շնորհիվ պատի թերթերի խմբագիրները պետք է վորոշ չափի գիտելիքներ ու փորձ ձեռք բերեն: Սակայն կոնսուլտացիայի ղեկավարը վոչ մի բուպեչպետք է մոռանա ընկ. Ստալինի խոսքերն այն մասին, թե՛ «բանվորական և գյուղական թղթակիցներին ժուռնալիստական տեխնիկայի վորոշ միջիմում սովորեցնելն, իհարկե, անհրաժեշտ է: Բայց հիմնականն այդ չէ: Հիմնականն այն է, վոր բանվորական և գյուղական թղթակիցներն իրենց աշխատանքի ընթացքում սովորեն և իրենց մեջ մշակեն ժուռնալիստ—հասարակական աշխատողի այն հոտառութեանը, առանց վորի թղթակիցը չի կարող կատարել իր միտիան և վորը չի կարելի պատվաստել սովորեցնելու վորեք արհեստական մեթոդով, այս բառի տեխնիկական իմաստով»:

Դրա համար ել վոչ մի դեպքում չի կարելի պատի թերթերի խմբագիրների մեջ կատարվելիք դաստիարակչական աշխատանքը վերածել միմիայն հեռակա կուրսերի ծրագիրն անցնելուն: Շրջանի կոլտնտեսութեանների կյանքից վերցրած կոնկրետ որինակներով պետք է շարունակ հեռակայողներին դաստիարակել բոլշևիկյան սկզբունքայնութեան, անհաշտութեան, սրութեան, տպավորվելու և զգայնութեան վորդով: Պետք է խմբագիր

ներին սովորեցնել, վոչ միայն խոր քննադատության յենթարկել թերությունները, այլ և տեսնել մեր հիանալի կյանքը, սովորեցնել՝ գրել լավի մասին, նորի մասին: Պետք է խրմբագրի մեջ սեր դաստիարակել զեպի իր կողմնատեսությունը, զեպի վողջ կողմնատեսային կարգը, սեր՝ զեպի իր հայրենիքը: Պետք է պատասխանատվություն դաստիարակել զեպի թերթի աշխատանքը:

Պարագմունքները պետք է խորապես համակված լինեն կուսակցականությամբ: Պետք է կոնսուլտացիան վերածել լուրջ, բուշեիկյան դաստիարակության դպրոցի: Միանգամայն անթույլատրելի յե, յերբ խմբագրությունն այդ գործի ղեկավարությունը հանձնարարում է մի յերկրորդական աշխատողի: Վոր պես կանոն՝ հեռակայողներին պիտի ղեկավարի ինքը՝ խմբագիրը, կամ նրա տեղակալը: Կոնսուլտացիան կարևոր քաղաքական աշխատանք է: Կուսակցության շրջկոմը պետք է հատուկ ուշադրություն դարձնի գյուղթղթակիցների ուսուցման վրա, ապահովի նրանց աշխատանքը ղեկավարությամբ և ոժանդակությամբ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՆԱԽԱՂԱՏՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՅԻՆ

Կոնսուլտացիային պետք է խնամքով նախապատրաստվել:

Ամենից առաջ ինքը՝ ղեկավարը պետք է ուշիուշով յուրացնի դասախոսության նյութը: Վոչ մի ղեպքում չի կարելի այսպես դատել, թե՛ «դասախոսությունը գյուղթղթակցի համար է նախատեսված, իսկ յես նյութը բավականաչափ գիտեմ, ուստի բավական է, վոր մի թեթև աչքի անցկացնեմ դասախոսությունը»: Ղեկավարը պետք է ուշի ուշով կարգա մեր օղորդված յուրաքանչյուր դասախոսությունը և նշի, թե կոնսուլտացիայի բնթացքում զրույցի հանգուցային հարցերը վորոնք են լինելու:

Պարտադիր չէ, վոր զրույցի համար վերջվի դասախոսության ամբողջ նյութը: Բաղմապիսի հարցերով ծանրաբեռնած կոնսուլտացիան ցրված ու մակերեսային կլինի: Հարցերը պետք է ուշադրությամբ ընտրել, իսկ թե վո՞ր հարցերն ընտրել, այդ ղեկավարին պարզ կլինի՝ հաշվի առնելով տեղական պայմանները: Որինակ՝ յեթե շրջանում պատի թերթերում տեղավորված թղթակցությունների իրականության համապատասխան լինելը կադում է, ապա, բնական է, վոր այդ հարցի վրա ավելի մեծ ուշադրություն պիտի դարձնել, քան մյուս հարցերի վրա: Ուրեմն ղեկավարը պետք է լավ իմանա շրջանի պատի թերթերը, նրանց դրական ու բացասական կողմերը: Պարագմունքներին պատրաստվելիս կոնսուլտանտն իր ձեռքի տակ պիտի ունե-

նա, բացի դասախոսութիւններէց ու գրքերէց, նաև այն պատի թերթերը, վոր լույս են ընծայել հեռակայողները: Պետք է այնպես կազմակերպել, վոր ունկնդիրներն իրենց պատի թերթի վերջին համարը վոչ թէ կոնսուլտացիայի որը բերեն, այլ կոնսուլտանտին ուղարկեն հերթական պարապմունքից մի քանի որ առաջ:

Ղեկավարը նախորոք պետք է մտածի, թէ ինչ ձևով պիտի հարցեր տա ունկնդիրներին: Հարցերն այնպես պիտի տալ, վոր այդ հարցերը բարձրացնեն ունկնդիրների հետաքրքրութիւնն ու ակախութիւնը: Միևեւոյն հարցը տարբեր ձևերով կարելի յե ձևակերպել: Որինակ՝ կարելի յե հարցնել. «ինչպիսի՞ն պիտի լինի գյուղթղթակիցը»: Բայց այդ նույն հարցը կարելի յե դնել նաև ուրիշ կերպ: Որինակ՝ կարելի յե հարցնել, թէ ունկնդիրներն ինչպե՞ս են հասկանում «Յուրաքանչյուր գյուղթղթակից՝ հարվածային և յուրաքանչյուր հարվածային՝ գյուղթղթակից» լողոնդը: Յերկու հարցի լոյանդակութիւնն էլ նույնն է, սակայն առաջին ձևակերպումով տրված հարցին ունկնդիրները միայն մեքենայորեն պատասխան կտան դրժուկի համարձայն, իսկ յերկրորդ ձևով տրված հարցը կստիպի մտածել, հեռակայողին կատարի իբ միայն արտահայտել իր փորձից, իր շքապատից որինակներ բերելով:

Հարցերը նախապատրաստելուց հետո պետք է նախապես վորոչէլ, թէ պարապմունքի ժամանակ վոր հեռակայողին պիտի հանձնարարվի յելույթ ունենալ և հաղորդել իր աշխատանքի վորձը: Այդպիսի հաղորդումների համար պետք է ընտրել այնպիսի թեմաներ, վորոնք սերտորեն կապված են դասախոսութիւնի հարցերի հետ: Այսպես որինակ՝ «յես ինչպես եմ պլան կազմում», «ինչով ենք զբաղվում խմբիկի նիստերին»: Հասկանալի յե, վոր ղեկավարը պետք է լավ ճանաչի իր ունկնդիրներին, վորպեսզի ճշտորեն բաշխի յելույթների թեմաները, վորպեսզի համեմատաբար ուժեղ և վորձված հեռակայողներն ողնեն նրան պարապմունքները ղեկավարելու գործում:

Յուրաքանչյուր թեմայի շուրջը ղեկավարն անպայման լրացուցիչ դրականութիւն պիտի կարդա: Այդ դրականութիւնը նրա համար պիտի կարդալ, վորպեսզի կոնսուլտանտը պարապմունքներին գա ավելի լավ պատրաստված: Այդ ղեկավարը ղեկավարն ավելի փոտտահ կերպով կղեկավարի պարապմունքները, ավելի հետաքրքիր ձևով կղնի հարցերը և կկարողանա ավելի լավ պատասխանել հեռակայողների հարցերին:

Բայց ի՞նչ կարդալ պարապմունքների համար:

Հանձնարարում ենք կարդալ «Բոլշեվիկ

յան մամուլի խմբագրումն ու մասսայական աշխատանքը» վերնագրով ձեռնարկը, վոր հրատարակել է «Պրավդա»-յի անվան ժուռնալիստիկայի Համամիութենական կոմունիստական Ինստիտուտը:

Խմբագիրը շատ անհրաժեշտ նյութ կգտնինաև «Ռաբոչի-կրեստյանսկիյ կորեսպոնդենտ», «Րայոննայա և Պոլիտատղելովսկայա Պեչատ», «Սելկոր» ժուռնալներում և Համ. կոմ. ժուռնալ. Ինստիտուտի «Պրավդիստ» թերթում, «Խորհրդային Հայաստան»-ի բանգլուղ թղթակցի թերթիկում և այլն:

ԿՈՆՍՈՒԼՏԱՅԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԵԹՈԴԸ

Կոնսուլտացիան կենդանի զրույց է: Յուրաքանչյուր կոնսուլտացիայի սլանը վորոշվում է հենց այն դասախոսությամբ, վոր ուղարկվում է կոնսուլտանտին: Լրացուցիչ նյութն ունենդիրներին պատի թերթերն են:

Կոնսուլտացիայի ղեկավարը պետք է շատ լավ իմանա պատի թերթերը, գիտենայ նրանց թերություններն ու արժանիքները, վորպեսզի յուրաքանչյուր կոնսուլտացիա դառնա հեռակայողներին փորձի լայն փոխանակություն: Ծրագրի բոլոր դասախոսությունները հեռակայողներին հետաքրքիր յեղույթներ ունենալու լայն հնարավորություններ են տալիս:

Որինակ՝ ուսումնասիրվում է «Ինչպես կազմակերպել պատի թերթի աշխատանքը» դասախոսությունը:

Յեթե հեռակայողներին ուղղակի հարց տրվի, թե կարդացածն ով ինչպես է հասկացել, ապա այդ ունչնդիրներին մեջ ախտիվ հետաքրքրություն չի ստեղծվի: Պարագմունքը բոլորովին այլ կերպ կընթանա, յեթե մեկ այս, մեկ այն խմբագրին առաջարկվի պատմել, թե նա ինչպես է կազմակերպել խմբկոլի աշխատանքը, կամ թե ինչո՞ւ մինչև այժմ նա մենակ է աշխատում, առանց խմբագրական կոլեգիայի: Պետք է խմբագիրներին առաջարկել՝ որինակներ բերել, թե իրենք ինչպիսի վոխհարարեբության մեջ են բրկգաղերի հետ, կուսկազմակերպչի հետ և այնպես անել, վոր յուրաքանչյուր յեղույթ ունցող ինքը՝ դասախոսության հիման վրա տա իր աշխատանքի գնահատականը:

Շատ կարևոր է պատի թերթի խմբագրին վարժեցնել, վոր քննադատաբար վերլուծի թե իր պատի թերթը և թե մյուս խմբագիրների թերթերը: Իրա համար պետք է հեռակայողներին լայնորեն մասնակից անել իրենց լույս ընծայած թերթի քննարկմանը, իհարկե ըստ դասախոսության բովանդակությանը:

Կոնսուլտացիան այս մեթոդով անցկացնելու դեպքում ղեկավարի դերը բարդանում է: Նա պետք է կենդանի զրույց ունենա,

պետք է կարողանա յուրացրածի ստուգումը կայել խմբագիրների յերույթների հետ, իր յեզրակացուցիչ խոսքում ընդհանրացնել այդ յելույթները: Հասկանալի յե, վոր այդ ավելի ոգտակար կլինի, քան յեթե ինքը 2 Ժամ խոսի, կամ պարապմունքները դարձնի ստուգելի հարցերի պատասխաններ պահանջելը:

Մի քանի հեռակայողի վորոչ հարցի մասին արտահայտվելու հնարավորություն տարուց հետո ղեկավարը պետք է իմի ամփոփի և համառոտակի ձևակերպած յեզրակացություն տա: Ապա լավ կլինի ունկընդիրներին առաջարկել, վոր դրի առնեն այս կամ այն դրույթը, վորը բղխում է վորպես արդյունք ավյալ հարցի շուրջը յեղած գրույցի: Ղեկավարի յեզրափակումը պետք է ընդհանրացնի ունկընդիրների ասածները: Յուրաքանչյուր կոնսուլտացիայում այդ հանդիսանում է պատասխանատու մոմենտ: Յեզրակացությունը պետք է պարապմունքը հասցրնի վորոչ (խմբագիրների ըմբռնողությանը մատչելի) բարձրության, ունկընդիրների հիշողության մեջ ամբացնի վորոչ դրույթներ: Կոնսուլտացիայում խոսքն ինչպիսի գործնական խնդիրների ել վերաբերի, հարկավոր է այնպես անել, վոր հեռակայողները յուրացնեն բոլջևիկյան մամուլի աշխատանքի հիմնական սկզբունքները:

Նայած թեմայի բնույթին, շրջանի արտահայտվելու հնարավորություն

129598-67 40402-67

ուսանձնահասակություններին, ունկընդիրների մակարդակին՝ այս կամ այն պարապմունքի մեթոդն ել կարող է փոփոխվել: Որինակ՝ դոկտրինային ունեցող դրույթյունն ու պայմանները կարող են կոնսուլտացիայի ղեկավարին ստիպել, վոր «գյուղթղթակիցների պաշտպանությունը հայաժանքներին» թեմայի պարապմունքի ժամանակ նա հրավիրի շրջանային դատախազին՝ ղեկուցելու թե շրջանային դատախազությունն ինչպես է պայքարում գյուղթղթակիցների հայաժանքների դեմ: «Կուսակցականությունը մամուլում» պարապմունքի ժամանակ պետք է մի քանի կուսակցական կերպիչ հրավիրել և խնդրել, վոր նրանք պատմեն, թե իրենք ինչպես են ղեկավարում թերթերին:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԲՆԵՐԸ

Յուրաքանչյուր դասախոսության համար նախատեսված է գործնական առաջադրանքների վորոչ խմբակ, վոր պետք է կատարեն հեռակայողները: Ղեկավարը պետք է կանոն դրածնի, վոր այդպիսի վոչ մի աշխատանք առանց ստուգման ու գնահատականի չթողնի: Գործնական պարապմունքները յեթե մնան առանց գնահատականի, առանց ուղղումների ու ջուլցումների, քիչ ոգուտ կտան:



Գործնական պարապմունքները պետք է բազմապիսի դարձնել: Իրա համար ել չի կարելի գործնական աշխատանքը միմիայն պատի թերթ հրատարակելը դարձնել: Ոգտակար է հեռակալողներին հանձնարարել ուրիշ առաջադրանքներ ևս.—մտածել ու գտնել, թե այս կամ այն նկարի տակ ինչ գրել, վոր ավելի լավ լինի, հետազոտության հորցացուցակ կազմել, թերթի համարի պլան նախապատրաստել և այլն: Չպետք է խորչել նույնիսկ այնպիսի «մանրուք» թվացող խնդիրներից, ինչպիսիք են որինակ՝ հեռակալողին սովորեցնել ճիշտ կարգալ, արտագրել, ճիշտ ոգտագործել քանոնն ու մատիտը, հաջող ծաղրանկար ընտրել իր թերթի համար և այլն:

Գործնական աշխատանքների հիմնական մասը պետք է հանձնարարվի տանը կատարել: Իսկ յեթե կոնսուլտացիան 2—3 ժամ շարունակելու հնարավորություն կա, ապա շատ ողտակար կլինի, վոր հեռակալողը վորոշ գործնական առաջադրություններ կատարի հենց այդ տեղ՝ ղեկավարի ներկայությամբ:

Ինքնին հասկանալի յե, վոր կենդանի գրույցն ու գործնական աշխատանքները պետք է սերտորեն կապված լինեն իրար հետ: Զրույցի ընթացքում պետք է վերլուծել աշխատանքի արդյունքը և ունկնդիրներին նախապատրաստել՝ կատարելու հետևյալ հանձնարարությունները:

Ղեկավարը նախորոք պետք է լավ մտածի ու վորոշի նաև այն, թե հենց կոնսուլտացիայի ընթացքում կատարելու համար ինչպիսի գործնական աշխատանքներ պիտի տա: Այդ գործնական աշխատանքների նյութը պիտի լինի վոչ թե պատահական, այլ այժմեյական նյութ, հիմնված այն հերթական խնդիրների վրա, վորոնց կատարման համար պատի թերթը պիտի պայքարի:

Պետք է այնպես անել, վոր յուրաքանչյուր հեռակալող թերթ գուրս գրի և կանոնավոր կարգա: Նրան պետք է թերթ կարգալ սովորեցնել: Հեռակալողի համար թերթը նոր մտքերի, նոր թեմաների աղբյուր է՝ իր պատի թերթում աշխատելու համար: Թերթը կարգալով նա անմիջապես կարող է գլխի ընկնել, թե՛ ահա, արժե այսինչ հոգվածը կտրել և տեղավորել իր թերթում, կամ թե՛ այսինչ գեպի, այսինչ վորոշման մասին հարկավոր է մի փոքրիկ հոգված գրել և այլն: Յեվ ղեկավարը պետք է հեռակալողին սովորեցնի, վոր հենց այդպես կարգա թերթը:

Ամեն մի պարապմունքին կարելի յե տատատասնհինգ բոպե ժամանակ գտնել և պատմել թերթերի վերջին համարներում տեղավորված այս կամ այն հետաքրքիր նյութի մասին: Կամ թե կարգալ մի հոգված, մի թղթակցություն և հարց տալ, թե հեռակալողներն այդ նույն թեման ինչպես կգարգանեն իրենց պատի թերթում:

Յանկալի յե, վոր ղեկավարը խմբագիրնե-
րին խորհուրդ տա, թե նրանք ի՛նչ զեղարվեա-
տական գրքեր պիտի կարդան:

Հարկավոր և պարբերաբար խմբագիրնե-
րին պատմել պատի թերթերի այն նոր նախա-
ձեռնությունների մասին, վոր լուսաբանվում
են «Ռարոչի Կրեստյանսկի կորեսպոնդենտ» և
«Սելիոր» ժուռնալներում, խմբագիրների մեջ
հետաքրքրություն ստեղծել զեպի այդ ժուռ-
նալները և կազմակերպել նրանց բաժանոր-
դագրությունը:

Վորպեսզի ուսուցումը հաջող անցնի,
հարկավոր և; վոր հենց սկզբից այդ ուսու-
ցումը կատարվի սահմանված հաստատուն
դասացուցակով. պետք է ուղարկված դասա-
խոսություններն իր ժամանակին հանձնել հե-
ռակայողներին, պարապմունքներն սկսել
ճշտորեն վորոչված ժամին, պարապմունքների
համար հարմար տեղ ապահովել: Պարապմուն-
քի սենյակում անպայման պիտի կախել վեր-
ջին պատի թերթերը, մամուլի խնդիրներին վե-
րաբերող ժուռնալներ ու գրքեր ունենալ: Ղե-
կավարը պետք է հոգ տանի նաև այն մասին,
վոր պարապմունքի տեղում լինի զբառախ-
տակ, կավիճ, վոր ընդմիջումները կանոնավոր
հաջորդեն իրար:

Մոլորաբար այս ամենը մանրուք է հա-
մարվում և թերազնահատվում է: Մինչդեռ
ուսումնական ամուր կարգապահությունն ու

պարապմունքների կանոնավորությունն զգալի
չավով բարձրացնում են հեռակա ուսուցման
արդյունավետությունը:

Կոնսուլտացիաները պետք է կազմակեր-
պել չրջանային թերթի խմբագրությանը կից՝
չրջանային կենտրոնից վոչ հեռու ապրող հե-
ռակայողների համար և չրջանի առանձին
կետերում՝ չրջկենտրոնից հեռու ապրող հեռա-
կայողների համար:

Սրանք են այն ընդհանուր ցուցումները,
վոր պետք է նկատի ունենա յուրաքանչյուր
ղեկավար:

Պարապմունքների մեթոդին վերաբերող
հարցերի մասին ավելի կոնկրետ ցուցումներ,
ծրագրեր ու գրականություն կուղարկվեն յու-
րաքանչյուր հերթական դասախոսության հետ:

Առաջացած լրոր դժվարությունների
մասին ղեկավարն անմիջապես պետք է դիմի
«Ռորհրդային Հայաստան»-ի ուսումնա-մեթո-
դական բյուրոյին՝ խորհուրդներ ստանալու:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հավ կլինի առաջին դասախոսությունն
ուսումնասիրել յերեք կոնսուլտացիայի ըն-
թացքում: Առաջին կոնսուլտացիան պետք է
նվիրել պատի թերթի առանձնահատկու-
թյունների և խնդիրների թեմային:

Յերկրորդ կոնսուլտացիան՝ պլանին և նա-
մակների մշակմանը:

Յերրորդ կոնսուլտացիան՝ տեղերում ինչ-
պես ապահովել կուսակցական ղեկավարու-
թյունը պատի թերթի ու գյուղթղթակիցների
նկատմամբ և խմբագիրն ինչպես պիտի աշխա-
տի ինքն իր վրա:

1. ԱՌԱՋԻՆ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՅԻ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ

Նպատակահարմար է պարապմունքը
զրույցով սկսել այն մասին, թե այժմ ինչ
խնդիրներ են դրված պատի թերթերի առաջ,
ինչով պիտի զբաղվեյին պատի թերթերը վեր-
ջին ամսվա ընթացքում: Յերբ պարզվի, թե
ինչով և ինչպես պիտի զբաղվեն պատի թեր-
թերը, ղեկավարը կարող է քննության առնել
մեկ-յերկու պատի թերթ: Այդ թերթերը
պետք է զբաղվեյին այսինչ հարցերով, բայց
իրականում ինչով են զբաղվել: Ասածները
պատկերավորելու համար միմիայն բացասա-
կան որինակներ չպիտի բերել, անպայման
պետք է ընտրել և՛ բացասական և՛ դրական ու-
րինակներ:

Պատի թերթերի վերլուծման ամբողջ ըն-
թացքում ղեկավարը պետք է շեշտի այն պա-
հանջները, վոր առաջադրվում են պատի թեր-
թերին մայիսի 4-ին կարմիր բանակի ակադե-
միականների ավարտական հանդեսին ընկ.

Ստալինի ունեցած յեւույթի կապակցությամբ:
Ղեկավարը կոնկրետ որինակներով պետք է
ցույց տա, թե պատի թերթն ինչպիսի զգայ-
նությամբ ու հոգատարությամբ պետք է վե-
րաբերվի դեպի մարդիկ, դաստիարակի ա-
համողի նրանց:

Անհրաժեշտ է այդ պարապմունքին բարձ-
րաձայն կարգալ ընկ. Ստալինի ճառը: Այդ
անպայման պիտի անել, վորպեսզի հետեյալ
քոլոր պարապմունքները պարզաբանեն այն
հարցը, թե ինչ է նշանակում «կադրերն են
վորոչում ամեն ինչ» լողունդը կոլտնտեսային
պատի թերթի համար:

Յերբ արդեն ղեկավարը ցույց է տվել,
թե ինչպես պիտի վերլուծել և քննադատել
պատի թերթը, շատ ոգտակար կլինի ունկն-
դիրների փոքրիկ խմբերին (3-4 մարդուց
բաղկացած) պատի թերթեր բաժանել, վոր-
պեսզի նրանք կես ժամվա ընթացքում կարդան
այդ թերթը, ապա քննադատական-վերլու-
ծական յեւույթներ ունենան: Այդ հնարավո-
րություն կտա ստուգելու, թե յուրաքանչյուր
ունկնդիրն ինչպես է յուրացրել դասախոսու-
թյան նյութը:

Այս ամբողջ աշխատանքը յերկու ժամից
ավելի չի տևի: Մնացած ժամանակը պետք է
նվիրել «խմբկույի կազմակերպումը» թեմային:
Պետք է խոսել այնպիսի խմբկույի մասին, վոր
ը կարողանա ապահովել պատի թերթի հա-

ճախակի ու կանոնավոր հրատարակումը (ինչպէս ընտրել խմբկողը, ինչպէս բաշխել պարտականությունները, վորն է խմբագրի դերը):

Պարապմունքն ավարտելուց հետո զեկավարն ունկնդիրներին գործնական աշխատանք է տալիս՝ տանը կատարելու համար: Այդ աշխատանքը նշված է դասախոսութեան վերջում. պատի թերթ լույս ընծայել՝ խմբկողի հաշվետվութեամբ, հաշվետու զեկուցում տալ, խմբկողի կազմը լրացնել կամ վերընարել և պարտականությունները բաշխել այնպէս, ինչպէս ամփած է կոնսուլտացիայում:

II. ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՍՈՒՆՏԱՅԻԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ

Յերկրորդ կոնսուլտացիան պետք է սկսել առաջին պարապմունքի համառոտակի ամփոփումով: Այնուհետև պետք է անցնել պլանի հարցին:

Հարկավոր է սաուզել, թե ունկնդիրները հասկանո՞ւմ են արդյոք պատի թերթի պլանի անհրաժեշտությունը: Նրանցից լավագույնները պետք է պատմեն պլանով աշխատելու իրենց փորձի մասին: Պետք է քննել, թե ինչպէս պիտի կազմել պլանը:

Յուրաքանչյուր հեռակայող պետք է կազմի իր թերթի հերթական համարի պլանը:

Պլանները կազմելուց հետո պետք է խոսք տալ նրանցից մի քանիսի հեղինակներին: Կրեկտիվ ձևով պետք է վերլուծել այդ պլանները և տանը կատարելու առաջադրանք տալ — պատի թերթի համար լույս ընծայել և խմբագրական կրեդիտայի հետ յերկու ամփոփ պլան կազմել:

Այնուհետև կարելի յէ անցնել նամակները մշակելու հարցին: Անհրաժեշտ է խմբագիրներին լավ հասկացնել, վոր պլանով աշխատելու հետ միասին հարկավոր է մեծ ուշադրութեամբ ու հոգատարութեամբ վերաբերվել դեպի յուրաքանչյուր նամակը: Դասախոսությունը պատկերավորող որինակները կարելի յէ վերցնել վոչ միայն պատի թերթերից, այլ և շրջանային թերթից:

III. ՅԵՐՐՈՐԴ ԿՈՆՍՈՒՆՏԱՅԻԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ

Յերրորդ կոնսուլտացիան լավ է սկսել տանը կատարած աշխատանքի ստուգումով: Հեռակայողները պետք է պատի թերթ լույս ընծայելին և յերկու ամփոփ պլան կազմելին: Յեթե զեկավարն այդ նյութերն ստանա պարապմունքից առաջ, նա կկարողանա սխառեմի վերածել այն և լավ նախապատրաստվել պարապմունքին: Պարապմունքի կենտրոնական խնդիրն է — կուսակցական զեկավարությունը մամուլի նկատմամբ: Պետք է պարզել,

Թե պատի թերթերի խմբագիրները հաշիվ տալի՞ս են կուսակազմակերպչին, ինչպե՞ս են կատարում կուսակազմակերպիչների ցուցումները: Շատ լավ կլինի այդ պարապմունքին հրավիրել կուսակազմակերպիչներին և կուսակցութեան շրջկոմի ներկայացուցչին:

Մնացած ժամանակը պետք է նվիրել այն հարցին, թե խմբագիրն ինչպե՞ս պիտի աշխատի իր վրա: Այս հարցն սկսելիս կարելի յե անկնդիրներին ուշադրութեամբ կենտրոնացնել յերկու հարցի վրա. նախ՝ խմբագիրները սովորո՞ւմ են արդե՞րք քաղցր պրոցեսներում, քաղաքականապես աճո՞ւմ են արդե՞րք (այդ շատ լավ կարելի յե կապել մամուլի կուսկցականութեան թեմայի հետ) և յերկրորդ՝ խմբագիրները զիտե՞ն արդե՞րք բանգրող թղթակցական ժուռնալների մասին: Այստեղ ընդհանուր կոչեր շատ չպիտի լինեն: Ամենից ոգտակարն է ժուռնալից վորևէ հետաքրքիր հոդված կարդալ:

Հեռակայողների տանը կատարած աշխատանքը կլինի—կրկնել ամբողջ դասախոսութեանը և գրավոր պատասխանել ստուգիչ հարցերին:

Ծանոթութիւն.— Յեթե տեղական պայմանները հնարավորութիւն չեն տալիս առաջին դասախոսութեանը յերեք պարապմունք նվիրել, այդ դեպքում կոնսուլտանտը կարող է պլանը վերա-

կազմել: Մեր առաջարկած վարիտանութեան կրկնորդ պարապմունքի նյութի մի մասը («պլանային աշխատանքը») կարելի յե կցել առաջին կոնսուլտացիային, իսկ մյուս մասը («նամակների մշակումը») կարելի յե փոխադրել հաջորդ պարապմունքին:

ՊԱՐԱԳՄՈՒՆԻՏԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԶԱՄԱՐ ՂԵՎՎԱՐՆ ԻՆՉ ՊԻՏԻ ԿԱՐԴԱ

1 «Редактирование и массовая работа большевистской печати» դասադրքի 109, 122, 333—341, 364—395, 413—420 էջերը:

2. Данилин—«Степная газета колхозной бригады» 3—21 և 33—39 էջերը:

3. Горелик—«Руководство рабселькоровским движением» 6—22 էջերը:

Պատի թերթերի խմբագիրների աշխատանքի փորձը լուսարանող հոդվածներ ու թղթակցութիւններ պարբերաբար տպագրվում են նաև հետևյալ ժուռնալներում՝ «Рабоче—крестьянский корреспондент», «Селькор», «Районная и политотделовская печать»:



Մեր մեթոդական ցուցումները նպատակ ունեն ցույց տալ կոնսուլտացիայի ուղղութիւնն ու բնույթը: Առաջին դասախոսութեան

ճշակման պլանը կրում է որինակելի բնույթի
Յուրաքանչյուր ղեկավար պետք է մեր
մեթոդական ցուցումների հիման վրա կոն-
սուլտացիայի պլան կազմի՝ հաշվի առնե-
լով իրենց տեղական պայմաններն ու առանձ-
նահատկությունները:

Կոնսուլտացիան ավարտելուց հետո ղե-
կավարին խորհուրդ ենք տալիս պահել իր
մոտ հեռակալողների բերած պատի թերթերի
բոլոր համարները, վորպեսզի այդ համարնե-
րը համեմատի այն համարների հետ, վոր
նրանք կպատրաստեն պարագմունքների վեր-
ջում, կուրսերն ավարտելուց առաջ:

Ղեկավարը պետք է պատի թերթերից
յերեք համար (ամենալավը, միջակը և ամենավատը)
ինչպես և 2 պլան (ամենալավն
ու ամենավատը) ուղարկի «Նորհրդային Հա-
յաստան»-ի խմբագրության՝ վորպես առա-
ջին դասախոսության ստուգիչ աշխատանք:

Հեռակա դասընթացների մեթոդական
բյուրոն այդ պատի թերթերի մասին տեղու-
թյուններ կտա: Այդ տեսությունները պետք
է քննության առնվեն կոնսուլտացիայում:



14901

А. 193 ⁶ Г.

Акт № 110

Вкладн. л.